ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» հունվարի 2025թ. N 08-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 16-ի նիստի N 54 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում 2025 թվականի մարտի 3-21-ը նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 24 կրեդիտ:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.01.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ